



« ԴՄ-2-1/92056-14

17-01-2014»

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«04» փետրվարի 2014 թ.

N 18-Ն/1

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆ ՍԿՍԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 1821-Ն որոշմամբ հաստատված ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի N 1231-Ա որոշմամբ և հիմք ընդունելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2009 թվականի հունվարի 19-ի N 5-Ա/1 հրամանը՝

Հրամայում եմ՝

1. Հաստատել՝

1) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, «Ձշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի, «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ՀՀ 2015-2017 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով (այսուհետ՝ ՄԺԾԾ) նախատեսվող ծրագրերի հիմքում դրվող ցուցանիշների՝ համապատասխան համակարգող նախարարի տեղակալի մոտ քննարկումների ժամանակացույցը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Նախարարության ՄԺԾԾ գործընթացը համակարգող նախարարի տեղակալի մոտ «Սոցիալական պաշտպանություն» ոլորտի (այսուհետ՝ Ոլորտ) առանձին բնագավառների պատասխանատուների, ինչպես նաև Ոլորտում գլխադասային չհանդիսացող պետական կառավարման մարմինների կողմից իրականացվելիք ծրագրերի գծով ՀՀ 2015-2017 թվականների պետական բյուջեների միջոցների հաշվին կատարվելիք ծախսերի ֆինանսավորման նախնական

չափաքանակների գծով առաջարկությունների քննարկումների ժամանակացույցը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Նախարարության աշխատակազմի վերլուծության և մոնիթորինգի վարչության պետին՝

1) մինչև 2014 թվականի փետրվարի 1-ը Ոլորտում գլխադասային չհանդիսացող պետական կառավարման մարմիններին տրամադրելու նպատակով՝ կազմել նրանց կողմից Ոլորտում իրականացվելիք ծրագրերի գծով ՀՀ 2015-2017 թվականների պետական բյուջեների միջոցների հաշվին կատարվելիք ծախսերի ֆինանսավորման նախնական չափաքանակների ներկայացման և քննարկումների ժամանակացույցը.

2) ըստ սույն հրամանի 2-րդ կետով հաստատված N 2 հավելվածով սահմանված ժամանակացուցի՝ մինչև 2014 թվականի մարտի 31-ը Նախարարության ՄԺԾԾ գործընթացը համակարգող նախարարի տեղակալի մոտ կազմակերպել ՀՀ ֆինանսների նախարարության «Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների, Հայաստանի Հանրապետության դատախազության, Հայաստանի Հանրապետության օրենքով ստեղծված մշտապես գործող մարմինների կողմից 2015-2017 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրերի հայտերի և 2015 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման և դրանք ներկայացման մեթոդական ցուցումների» (այսուհետ՝ Մեթոդական ցուցումներ) համաձայն կազմված՝ Ոլորտի առանձին բնագավառների պատասխանատուների, ինչպես նաև Ոլորտում գլխադասային չհանդիսացող պետական մարմինների կողմից իրականացվելիք ծրագրերի գծով ՀՀ 2015-2017 թվականների ՄԺԾԾ նախնական հայտերի (պետական բյուջեների միջոցների հաշվին կատարվելիք ծախսերի ֆինանսավորման նախնական չափաքանակների գծով առաջարկությունների) քննարկումներ.

3) մինչև 2014 թվականի մայիսի 10-ը ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնելու նպատակով՝ Մեթոդական ցուցումներին համապատասխան ամփոփել Ոլորտի 2015-2017 թվականների ՄԺԾԾ հայտը (քաղաքականության վերաբերյալ փաստաթղթերի և ներառյալ դրանով պայմանավորված ՀՀ 2015-2017 թվականների պետական բյուջեների ծախսերի գծով առաջարկությունները, ընդ որում, ինչպես ամփոփ, այնպես էլ ըստ Ոլորտում գլխադասային չհանդիսացող մարմինների գծով), հիմք ընդունելով ՄԺԾԾ-ի մշակման մշտապես գործող բարձրագույն խորհրդի կողմից հաստատված ՀՀ պետական բյուջեից կատարվելիք ծախսերի ֆինանսավորման 2015-2016 թվականների ճշգրտված և 2017 թվականի կողմնորոշիչ չափաքանակները.

4) մինչև 2014 թվականի հունիսի 20-ը ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնելու նպատակով՝ Մեթոդական ցուցումների համապատասխան ամփոփել և լրամշակել Ոլորտի ավարտուն տեսքի բերված 2015-2017 թվականների ՄԺԾԾ-ի նախագիծը (ծախսային ռազմավարության)՝ ներառյալ Ոլորտում գլխադասային չհանդիսացող պետական մարմինների ծախսերի, ինչպես նաև առնվազն մեկ ծրագրի գծով բյուջետային ծրագրի նկարագիրը (անձնագիր) և արդեն իսկ մշակված բյուջետային ծրագրերի նկարագրերի (անձնագրեր) վերանայված, թարմացված տարբերակները.

5) մինչև 2014 թվականի օգոստոսի 5-ը՝ Մեթոդական ցուցումների համապատասխան ամփոփել և Նախարարության աշխատակազմի

Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչությանը տրամադրել 2015 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտի մաս կազմող՝ 16-րդ հավելվածը (նախարարության ռազմավարական նպատակների նկարագրություն, բյուջետային ֆինանսավորման շրջանակներում ընդգրկված միջոցառումների ծրագրային խմբավորման և ծրագրերի ոչ ֆինանսական ցուցանիշները ներկայացնող փաստաթղթերի նախնական տարբերակներ)։

6) մինչև 2014 թվականի օգոստոսի 22-ը ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնելու նպատակով՝ ամփոփել և լրամշակել ՀՀ կառավարության 2015 թվականի պետական բյուջեի ուղերձի մասը կազմող՝ 2015 թվականի սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունների մասին ՀՀ կառավարության զեկույցի՝ «Սոցիալական պաշտպանություն» հատվածի նախագիծը (3 էջի սահմաններում)։

3. Նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության պետին՝

1) մինչև 2014 թվականի փետրվարի 7-ը ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնելու նպատակով՝ Մեթոդական ցուցումներին համապատասխան կազմել Ոլորտի ՀՀ 2015-2017 թվականների ՄԺԾԾ-ի և ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծի հիմքում դրվող բյուջետային մուտքերի կանխատեսումները։

2) Ոլորտի առանձին բնագավառների պատասխանատուներին տրամադրել մեթոդական աջակցություն համապատասխան ձևաչափերը լրացնելու համար, և կատարել ֆինանսական հաշվարկները։

3) Նախարարության վերլուծության և մոնիթորինգի վարչությանը տրամադրել Մեթոդական ցուցումներով պահանջվող և ֆինանսական հաշվարկներ պարունակող հավելվածները՝ Ոլորտի ՀՀ 2015-2017 թվականների ՄԺԾԾ-ի նախնական և ավարտուն տեսքի բերված հայտերը սահմանված ժամկետներում ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնելու համար։

4) մինչև 2014 թվականի օգոստոսի 5-ը ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնելու նպատակով՝ Մեթոդական ցուցումներին համապատասխան ամփոփել Նախարարության 2015 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտը (ներառյալ՝ ծրագրային բյուջետավորման ձևաչափով)։

5) մինչև 2014 թվականի օգոստոսի 5-ը ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնելու նպատակով՝ ամփոփել Նախարարության 2015 թվականի պետական բյուջեի նախագծի հիմքում դրվող բյուջետային եկամուտների առանձին եկամտատեսակներից և ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններից մուտքերի կանխատեսումների հայտերը։

6) մինչև 2014 թվականի օգոստոսի 5-ը ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնելու նպատակով՝ ամփոփել օտարերկրյա պետությունների ու միջազգային ֆինանսական կազմակերպությունների և այլ անձանց կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված վարկերի ու դրամաշնորհների՝ Նախարարության համակարգում 2015 թվականին օգտագործման մասին կանխատեսումները։

7) մինչև 2014 թվականի հոկտեմբերի 18-ը ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնելու նպատակով՝ ամփոփել ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ծախսային ծրագրերի գծով հատկացումները ըստ տարածքային բաշխման (առանձնացված՝ ըստ Երևան քաղաքի և առանձին մարզերի)։

4. Նախարարության աշխատակազմի միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի վարչության պետին՝

մինչև 2014 թվականի հուլիսի 7-ը՝ Մեթոդական ցուցումներին համապատասխան կազմել և Նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն ներկայացնել օտարերկրյա պետությունների ու միջազգային ֆինանսական կազմակերպությունների և այլ անձանց կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված վարկերի ու դրամաշնորհների՝ Նախարարության համակարգում 2015 թվականին օգտագործման մասին կանխատեսումները:

5. Նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն» ՓԲԸ-ի և «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրեններին՝

1) Նախարարության աշխատակազմի վերլուծության և մոնիթորինգի վարչություն ներկայացնել՝

ա. մինչև 2014 թվականի փետրվարի 28-ը՝ Մեթոդական ցուցումներին համապատասխան կազմված, համակարգի շահագրգիռ կազմակերպությունների հետ քննարկված և իրենց բնագավառը համակարգող նախարարի տեղակալի, Նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության հետ համաձայնեցված, ՀՀ պետական բյուջեից կատարվելիք ծախսերի ֆինանսավորման համապատասխան բնագավառի ՀՀ 2015-2017 թվականների ՄԺԾԾ հայտի նախնական տարբերակը,

բ. մինչև 2014 թվականի ապրիլի 1-ը՝ Մեթոդական ցուցումներին համապատասխան կազմված իրենց բնագավառի ՀՀ 2015-2017 թվականների ՄԺԾԾ հայտը,

գ. մինչև 2014 թվականի հունիսի 5-ը՝ Մեթոդական ցուցումներին համապատասխան կազմված իրենց բնագավառի ավարտուն տեսքի բերված ՀՀ 2015-2017 թվականների ՄԺԾԾ-ի նախագիծը,

դ. մինչև 2014 թվականի հուլիսի 4-ը՝ Մեթոդական ցուցումների 16-րդ հավելվածի ձևաչափին համապատասխան կազմել և ներկայացնել 2015 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտի մաս կազմող՝ համապատասխան բնագավառի ռազմավարական նպատակների նկարագրությունը, բյուջետային ֆինանսավորման շրջանակներում ընդգրկված միջոցառումների ծրագրային խմբավորման և ծրագրերի ոչ ֆինանսական ցուցանիշները ներկայացնող փաստաթղթերը,

ե. մինչև 2014 թվականի օգոստոսի 8-ը՝ ներկայացնել ՀՀ կառավարության 2015 թվականի պետական բյուջեի ուղերձի մասը կազմող՝ 2015 թվականի սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունների մասին ՀՀ կառավարության զեկույցի «Սոցիալական պաշտպանություն» հատվածի նախագծի՝ համապատասխան բնագավառի հատվածները (մինչև կես էջի սահմաններում)։

2) մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը՝ Մեթոդական ցուցումներին համապատասխան կազմել և Նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն ներկայացնել 2015 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտը։

3) մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը՝ Մեթոդական ցուցումներին համապատասխան կազմել և Նախարարության աշխատակազմի միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի վարչություն ներկայացնել օտարերկրյա պետությունների ու միջազգային ֆինանսական կազմակերպությունների և այլ անձանց կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրած վարկերի ու դրամաշնորհների՝ իրենց բնագավառներում 2015 թվականին օգտագործման մասին կանխատեսումները:

6. Նախարարության աշխատակազմի սոցիալական աջակցության վարչության պետին՝

մինչև 2014 թվականի հունիսի 16-ը՝ Մեթոդական ցուցումներին համապատասխան կազմել և Նախարարության աշխատակազմի վերլուծության և մոնիթորինգի վարչություն ներկայացնել սոցիալական աջակցության ոլորտի բյուջետային ծրագրի նկարագիրը (անձնագիր): Անձնագրի մշակման ընթացքում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ծրագրի շրջանակում իրականացվող միջոցառումների գծով ոչ ֆինանսական արդյունքային ցուցանիշներին՝ առաջարկելով համապատասխան որակական ցուցանիշներ բոլոր հնարավոր միջոցառումների գծով: Արդյունքային ոչ ֆինանսական ցուցանիշները (ներառյալ որակական) մշակելիս անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում գետեղված մեթոդական ուղեցույց հանդիսացող «Ծրագրերի և քաղաքականության միջոցառումների ձևակերպման ձեռնարկ»-ով:

7. Նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի, հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի, աշխատանքի և զբաղվածության վարչությունների պետերին՝

մինչև 2014 թվականի հունիսի 16-ը՝ Նախարարության աշխատակազմի վերլուծության և մոնիթորինգի վարչություն ներկայացնել Ձեր կողմից արդեն իսկ մշակված բյուջետային ծրագրի նկարագրի (անձնագիր) վերանայված, թարմացված տարբերակը: Անձնագրի վերանայման, թարմացման ընթացքում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել համապատասխան ծրագրի շրջանակում իրականացվող միջոցառումների գծով ոչ ֆինանսական արդյունքային ցուցանիշներին՝ առաջարկելով համապատասխան որակական ցուցանիշներ բոլոր հնարավոր միջոցառումների գծով: Արդյունքային ոչ ֆինանսական ցուցանիշները (ներառյալ որակական) մշակելիս անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում գետեղված մեթոդական ուղեցույց հանդիսացող «Ծրագրերի և քաղաքականության միջոցառումների ձևակերպման ձեռնարկ»-ով:

8. Նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին՝

մինչև 2014 թվականի հոկտեմբերի 1-ը՝ Նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն ներկայացնել ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ծախսային ծրագրերի գծով հատկացումները ըստ տարածքային բաշխման (առանձնացված՝ ըստ երևան քաղաքի և առանձին մարզերի):

9. Նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի, հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի,

կենսաթոշակային ապահովության, սոցիալական աջակցության, աշխատանքի և զբաղվածության, միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի վարչությունների և ժողովրդագրության բաժնի պետերին՝

1) մինչև 2014 թվականի սեպտեմբերի 5-ը ՀՀ կառավարություն ներկայացնելու (ըստ անհրաժեշտության) նպատակով՝ մշակել ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող ՀՀ օրենքների նախագծերը՝ մինչև 2014 թվականի սեպտեմբերի 24-ը ՀՀ կառավարությունում այդ օրենքների նախագծերը քննարկելու համար.

2) մինչև 2014 թվականի սեպտեմբերի 22-ը ըստ անհրաժեշտության ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնելու նպատակով՝ մշակել ՀՀ 2015-2017 թվականների հաստատված ՄԺԾԾ-ի մեջ ընդգրկված և 2015 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտում, որպես բյուջետային ֆինանսավորում պահանջող, նախատեսվելիք ծրագրերի նախագծերը:

10. Նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներին, նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության պետին՝

1) Նախարարության աշխատակազմի համապատասխան պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանում ներկայացնել՝

ա. մինչև 2014 թվականի փետրվարի 25-ը՝ Մեթոդական ցուցումներին համապատասխան կազմված և Նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության հետ համաձայնեցված, ՀՀ պետական բյուջեից կատարվելիք ծախսերի ֆինանսավորման ՀՀ 2015-2017 թվականների ՄԺԾԾ հայտի նախնական տարբերակը,

բ. մինչև 2014 թվականի մարտի 10-ը՝ Մեթոդական ցուցումներին համապատասխան կազմված ՀՀ 2015-2017 թվականների ՄԺԾԾ հայտը,

գ. մինչև 2014 թվականի մայիսի 30-ը՝ Մեթոդական ցուցումներին համապատասխան ավարտուն տեսքի բերված ՀՀ 2015-2017 թվականների ՄԺԾԾ հայտը,

դ. մինչև 2014 թվականի հունիսի 25-ը՝ Մեթոդական ցուցումներին համապատասխան օտարերկրյա պետությունների ու միջազգային ֆինանսական կազմակերպությունների և այլ անձանց կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված վարկերի ու դրամաշնորհների՝ Նախարարության համակարգում 2015 թվականին օգտագործման մասին կանխատեսումները,

ե. մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը՝ Մեթոդական ցուցումների 16-րդ հավելվածի ձևաչափին համապատասխան 2015 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտի մաս կազմող՝ համապատասխան բնագավառի ռազմավարական նպատակների նկարագրությունը, բյուջետային ֆինանսավորման շրջանակներում ընդգրկված միջոցառումների ծրագրային խմբավորման և ծրագրերի ոչ ֆինանսական ցուցանիշները ներկայացնող փաստաթղթերը.

2) մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը՝ Մեթոդական ցուցումներին համապատասխան կազմել և Նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն ներկայացնել ՀՀ 2015-2017 թվականների ՄԺԾԾ-ում ընդգրկված՝ 2015 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտը.

3) մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը՝ Մեթոդական ցուցումներին համապատասխան Նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն ներկայացնել 2015 թվականի պահպանման ծախսերի բյուջետային ֆինանսավորման հայտը:

4) մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը՝ Մեթոդական ցուցումներին համապատասխան կազմել և Նախարարության աշխատակազմի գնումների համակարգման և տնտեսական հարցերի բաժին ներկայացնել 2015 թվականի կարիքների համար գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ամփոփ անվանացանկերը:

11. «Նորք» տեղեկատվալերլուծական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենին՝ մինչև 2014 թվականի փետրվարի 3-ը Մեթոդական ցուցումներին համապատասխան կազմել և Նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն ներկայացնել ՀՀ 2015-2017 թվականների ՄԺԾԾ-ով նախատեսվելիք և ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծի հիմքում դրվող բյուջետային մուտքերի (Ընկերության տրամադրության տակ մնացող զուտ շահույթից պետության սեփականություն հանդիսացող բաժնեմասի դիմաց, որպես շահութաբաժին, ՀՀ պետական բյուջե վճարվելիք միջոցներից) վերաբերյալ կանխատեսումները:

12. Նախարարության ենթակայությանը հանձնված ՊՈԱԿ-ների տնօրեններին՝ կազմել և մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը Նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն ներկայացնել ՀՀ 2015-2017 թվականների ՄԺԾԾ-ով նախատեսված չափաքանակներին համապատասխան՝ յուրաքանչյուրի կողմից իրականացվող ծրագրերի գծով ծախսերի 2015 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերը՝ անհրաժեշտ հաշվարկներով և դրանց համապատասխան հիմքերով ու հիմնավորումներով:

13. Նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետին՝ մինչև 2014 թվականի սեպտեմբերի 22-ը սահմանված կարգով ՀՀ կառավարության հավանությանը ներկայացնելու համար՝ ՀՀ վարչապետի հետ 2015 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի, դրանց գծով առաջարկվող ֆինանսավորման չափերի, մակրոտնտեսական ցուցանիշների, բյուջետային եկամուտների, ծախսերի և դեֆիցիտի կանխատեսումների քննարկման և համաձայնեցման արդյունքով պայմանավորված՝ մշակել «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի համաձայն Երեխայի իրավունքների պաշտպանության 2015 թվականի տարեկան ծրագրի նախագիծը:

14. Նախարարության աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետին՝ մինչև 2014 թվականի սեպտեմբերի 22-ը սահմանված կարգով ՀՀ կառավարության հավանությանը ներկայացնելու համար՝ ՀՀ վարչապետի հետ 2015 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի, դրանց գծով առաջարկվող ֆինանսավորման չափերի, մակրոտնտեսական ցուցանիշների, բյուջետային եկամուտների, ծախսերի և դեֆիցիտի կանխատեսումների քննարկման և համաձայնեցման արդյունքով պայմանավորված՝ մշակել «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական

պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5.1-ին հոդվածի համաձայն Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2015 թվականի տարեկան ծրագրի նախագիծը:

15. Նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության պետին՝ մինչև 2014 թվականի սեպտեմբերի 22-ը սահմանված կարգով ՀՀ կառավարության հավանությանը ներկայացնելու համար՝ ՀՀ վարչապետի հետ 2015 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի, դրանց գծով առաջարկվող ֆինանսավորման չափերի, մակրոտնտեսական ցուցանիշների, բյուջետային եկամուտների, ծախսերի և դեֆիցիտի կանխատեսումների քննարկման և համաձայնեցման արդյունքով պայմանավորված՝ մշակել «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն Զբաղվածության կարգավորման 2015 թվականի պետական ծրագրի նախագիծը:

16. Նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության պետին, «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենին՝

մինչև 2014 թվականի հուլիսի 18-ը առաջարկություններ ներկայացնել Նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչություն՝ սույն հրամանի 15-րդ կետի կատարումն ապահովելու նպատակով:

17. Նախարարության աշխատակազմի գնումների համակարգման և տնտեսական հարցերի բաժնի պետին՝ նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն ներկայացնել՝

1) մինչև 2014 թվականի փետրվարի 20-ը՝

ա. Նախարարության միջոցով իրականացվող ծրագրերի մասով՝ գնումների գործընթացի կազմակերպման արդյունքում ձեռք բերված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների միավորի գները, և դրանց վերաբերյալ 2015-2017 թվականների կանխատեսումները,

բ. Նախարարության ենթակայությանը հանձնված ՊՈԱԿ-ների մասով՝ գնումների գործընթացի կազմակերպման արդյունքում ձեռք բերված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների միավորի գները, և դրանց վերաբերյալ 2015-2017 թվականների կանխատեսումները,

գ. Նախարարի և Նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կարիքների համար անհրաժեշտ ապրանքների ցանկը,

դ. Մեթոդական ցուցումներով սահմանված ձևաչափերին համապատասխան ներկայացնել Նախարարի և Նախարարության աշխատակազմի կարիքների համար գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումների անվանացանկը.

2) մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը՝

ա. Նախարարության միջոցով իրականացվող ծրագրերի գծով, գնումների գործընթացի կազմակերպման արդյունքում ձեռք բերված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների միավորի գները, և դրանց վերաբերյալ 2015 թվականի կանխատեսումները,


բ. Նախարարության ենթակայությանը հանձնված ՊՈԱԿ-ների մասով՝ գնումների գործընթացի կազմակերպման արդյունքում ձեռք բերված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների միավորի գները, և դրանց վերաբերյալ 2015 թվականի կանխատեսումները,

գ. Նախարարի և Նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կարիքների համար անհրաժեշտ ապրանքների ցանկը,

դ. Մեթոդական ցուցումներով սահմանված ձևաչափերին համապատասխան ներկայացնել Նախարարի և Նախարարության աշխատակազմի կարիքների համար գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումների անվանացանկը.

3) ՀՀ ֆինանսների նախարարության կողմից սահմանված ժամկետներում ապահովել Նախարարության 2015 թվականի պետական գնումների պլանի կազմման և ներկայացման աշխատանքները:

18. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Նախարարության աշխատակազմի ղեկավարին:



ԱՍԱՏՐՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի, «Նորք» տեղեկատվափերլուծական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ՀՀ 2015-2017 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսվող ծրագրերի հիմքում դրվող ցուցանիշների՝ համապատասխան համակարգող նախարարի տեղակալի մոտ քննարկումների

Հ/Հ	Քննարկման մասնակիցներ	Համապատասխան բնագավառը համակարգող նախարարի տեղակալ	Ներկայացված ՄԺԾԾ հայտերի քննարկման	
			ամսաթիվ	ժամ
1	<ul style="list-style-type: none"> Կենսաթոշակային ապահովության վարչություն Սոցիալական ապահովության պետական ծառայություն «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ «Նորք» տեղեկատվափերլուծական կենտրոն» ՓԲԸ 	Ա. Պետրոսյան	06.02	10 ⁰⁰
2	<ul style="list-style-type: none"> Հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչություն, ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալություն «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ «Նորք» տեղեկատվափերլուծական կենտրոն» ՓԲԸ 	Զ. Բաղդասարյան	06.02	11 ³⁰
3	<ul style="list-style-type: none"> Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչություն «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ «Նորք» տեղեկատվափերլուծական կենտրոն» ՓԲԸ 	Ֆ. Բերիկյան	06.02	14 ⁰⁰
4	<ul style="list-style-type: none"> Աշխատանքի և զբաղվածության վարչություն, Հայաստանի Հանրապետության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալություն «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ «Նորք» տեղեկատվափերլուծական կենտրոն» ՓԲԸ 	Ա. Պետրոսյան	07.02	11 ⁰⁰
5	<ul style="list-style-type: none"> Սոցիալական աջակցության վարչություն 	Ա. Պետրոսյան	07.02	14 ⁰⁰

	<ul style="list-style-type: none"> • «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ • «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն» ՓԲԸ 			
--	--	--	--	--

Քննարկումներին մասնակիցների կազմը որոշում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի համապատասխան տեղակալը՝ պարտադիր ներգրավելով նախարարության աշխատակազմի վերլուծության և մոնիթորինգի վարչության և ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության ներկայացուցիչներ:

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՄԺԾԾ գործընթացը համակարգող նախարարի տեղակալի մոտ «Սոցիալական պաշտպանություն» ոլորտի առանձին բնագավառների պատասխանատուների, ինչպես նաև ոլորտում գլխադասային չհանդիսացող պետական կառավարման մարմինների կողմից իրականացվելիք ծրագրերի գծով Հայաստանի Հանրապետության 2014-2016 թվականների պետական բյուջեների միջոցների հաշվին կատարվելիք ծախսերի ֆինանսավորման նախնական չափաքանակների գծով առաջարկությունների քննարկումների

Հ/Հ	Քննարկման մասնակիցներ	Ներկայացված ՄԺԾԾ հայտերի քննարկման	
		ամսաթիվ	ժամ
1.	<ul style="list-style-type: none"> Հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչություն ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալություն 	04.03	10 ³⁰ -13 ⁰⁰
2.	<ul style="list-style-type: none"> Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչություն 	05.03	14 ³⁰ -17 ⁰⁰
3.	<ul style="list-style-type: none"> Աշխատանքի և զբաղվածության վարչություն «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալություն 	06.03	10 ⁰⁰ -13 ⁰⁰
4.	<ul style="list-style-type: none"> «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն» ՓԲԸ 	10.03	11 ⁰⁰ -13 ⁰⁰
5.	<ul style="list-style-type: none"> Վերլուծության և մոնիթորինգի վարչություն 	10.03	14 ⁰⁰ -15 ³⁰
6.	<ul style="list-style-type: none"> Քարտուղարություն 	10.03	16 ⁰⁰ -17 ⁰⁰
7.	<ul style="list-style-type: none"> Միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի վարչություն 	11.03	11 ⁰⁰ -13 ⁰⁰
8.	<ul style="list-style-type: none"> Հասարակայնության հետ կապերի բաժին 	11.03	14 ⁰⁰ -15 ³⁰
9.	<ul style="list-style-type: none"> Անձնակազմի կառավարման բաժին 	11.03	16 ³⁰ -17 ³⁰
10.	<ul style="list-style-type: none"> Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն 	12.03	10 ³⁰ -13 ⁰⁰
11.	<ul style="list-style-type: none"> Գնումների համակարգման և տնտեսական հարցերի բաժին 	12.03	14 ⁰⁰ -15 ⁰⁰
12.	<ul style="list-style-type: none"> «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ 	12.03	15 ³⁰ -17 ³⁰
13.	<ul style="list-style-type: none"> Սոցիալական աջակցության վարչություն Ժողովրդագրության բաժին 	13.03	10 ³⁰ -13 ⁰⁰
14.	<ul style="list-style-type: none"> Կենսաթոշակային ապահովության վարչություն Սոցիալական ապահովության պետական ծառայություն 	17.03	10 ³⁰ -13 ⁰⁰
15.	<ul style="list-style-type: none"> ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն 	24.03	14 ⁰⁰ -15 ³⁰
16.	<ul style="list-style-type: none"> ՀՀ քաղաքաշինության նախարարություն 	25.03	15 ⁰⁰ -16 ⁰⁰

Քննարկումներին մասնակիցների կազմը որոշում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի համապատասխան տեղակալը՝ պարտադիր ներգրավելով նախարարության աշխատակազմի վերլուծության և մոնիթորինգի վարչության և ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության ներկայացուցիչներ: